«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ակադեմիայի
հիմնադիր-տնօրեն Սմբատ Լպուտյան

24.12.2015թ.

«Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշար-2016»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2016թ. հունվարի 8-16-ը Հայաստանի շախմատի ակադեմիան անցկացնում է Անդրանիկ Մարգարյանի 6-րդ հուշամրցաշարը: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով, 9 խաղափուլով, միջազգային գրոսմայստերի նորմայով:
Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե՝ մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:
Մրցանակային ֆոնդը կազմում է 4000 ամերիկյան դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1-ին մրցանակ - $ 1500
2-րդ մրցանակ - $ 1100
3-րդ մրցանակ - $ 900
4-րդ մրցանակ - $ 500

Հավասար միավորներ հավաքելու դեպքում, դրամական մրցանակները բաշխվում են հավասարաչափ, իսկ տեղերը որոշվում են ըստ՝

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի,
2. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Ժամանակացույց.

8 հունվարի – Բացման արարողություն	12:00
8 հունվարի – 1-ին տուր	15:00
9 հունվարի – 2-րդ տուր	15:00
10 հունվարի – 3-րդ տուր	15:00
11 հունվարի – 4-րդ տուր	15:00
12 հունվարի – 5-րդ տուր	15:00
13 հունվարի – 6-րդ տուր	15:00
14 հունվարի – 7-րդ տուր	15:00
15 հունվարի – 8-րդ տուր	15:00
16 հունվարի – 9-րդ տուր	11.00
16 հունվարի – Փակման արարողություն	18:00